

# ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՀԱՆԴԵՍԸ

Մեծ Յորելեանին առթիւ կեդրոնական վարժարանին ուսանողութեան կողմէ կազմակերպուած հանդէսը շատ պարզ տեղի ունեցաւ երէկ Ղալաթիոյ Սորհրդարանին մէջ, հինգշաբթիի եկեղեցական արարողութեանց աւարտումէն ետք:

Ամբողջ ուսանողութիւնը, ուսուցիչները և նուազ թուով հանդիսականներ, երկու սեռէ, ներկայ էին: Նախ և առաջ խօսեցաւ վարժարանին տնօրէն Բրօֆ. Ա. Սաչատուրեան պատմականը ընելով Ս. Սահակայ և Մեսրոպայ տօնին և հայ տառերու ու հայ տպագրութեան գիւտին: Տնօրէնին յաջորդեց Պարոն մը որ յանուն ուսանողութեան խօսեցաւ այս մեծ տօնին նշանակութեան վրայ:

Յանպատրաստից ձառ մը խօսեցաւ Սամաթիոյ աղագ. վարժարանին տեսուչ Պ. Գ. Սաժակ, նոյն նիւթին վրայ:

Իսկ Ֆրանսական Օբերայի յայտնի երգիչ Պ. Արմենակ Շահմուրատեան մէկ քանի բառերով յայտնելէ յետոյ թէ ինքը պերճախօսութիւն չունի. ըսաւ որ եթէ քիչ առաջուան բանախօսները իրենց ձառերով հանդիսականները փոխադրեցին դէպի պատմական անցեալը, դէպի հայրենի հողը, ինք ուրիշ տեսակի բանախօսութեամբ մը, իր ձայնովը, իր երգովը զիրենք պիտի փոխադրէ հոն:

Այս խօսքերէն ետք Պ. Արմենակ Շահմուրատեան իր հիանալի ձայնովը երգեց «Հայաստան»ը, արժանանալով բուն ծափերուն հանդիսականներուն կողմէ, որոնք փափաքեցան կրկնել տալ: